ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 170 – Ա **17 մայիսի 2019 թ**

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՅՈԹԵՐՈՐԴ ԽԱՂԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով **կարգադրում եմ՝**

1. Համահայկական ամառային յոթերորդ խաղերին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից մասնակցությունն ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ղազարյան Անուշավան – Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական /աշխատանքային խմբի ղեկավար/
Խլղաթյան Սևակ – Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար
Զազյան Կարեն - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Հարությունյան Վանիկ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Շահբազյան Հասմիկ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
Չարվադարյան Գեղամ - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ
Առաքելյան Ալեքսան - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ
Մարտիրոսյան Գուրգեն – Գավառ համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
Մուրադյան Սարգիս – Սևան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
Ադամյան Վազգեն – Ճամբարակ համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
Ավետիսյան Արմեն – Մարտունի համայնքի ղեկավար /համաձայնությամբ/
Մելքոնյան Արամ - Վարդենիս համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Խլղաթյան Խոսրով - «Գեղամա աշխարհ» թերթի խմբագիր /համաձայնությամբ/

2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) Համահայկական ամառային յոթերորդ խաղերին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից մասնակցությունն ապահովելու նպատակով աշխատանքներին ներգրավել մարզում գործող մարզական հաստատությունների տնօրեններին, մարզական հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին.

2) կատարված աշխատանքների մասին պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

17.05.2019

ՄԱՐԶՊԵՏ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

GNEL SANOSYAN GNEL 1710830069

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ